**Արձանագրություն N 5**
**ՋԿ-ԳՀԱՇՁԲ-21/6-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 25.05.2021թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Է. Մխիթարյանը, Տ. Բոյախչյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հանձնաժողովի նիստի օրակարգ**

---

Գնահատող հանձնաժողովի 20.05.2021թ. N 4 արձանագրությամբ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-21/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Գորիսի Ջրատարշին» ՓԲ ընկերություններից պահանջված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

**Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները**

---

Հանձնաժողովի նիստում ելույթ ունեցան հանձնաժողովի անդամները՝ նշվեց, որ հանձնաժողովի 20.05.2021թ. N 4 արձանագրությամբ պահանջված հրավերի Հավելված 1.1-ը (սարքեր և սարքավորումների նկարագիր)՝ մասնակիցներ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Գորիսի Ջրատարշին» ՓԲ ընկերությունների կողմից շտկվել է.

Մասնակից ընկերությունների ներկայացուցիչները պարզաբանեցին սարքավորումների վերաբերյալ հանձնաժողովի ներկայացրած հարցադրումները՝

«Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ ընկերությունը ներկայացրեց, որ սարքավորումները Հավելված 1.1-ում ներկայացվել են նոր և ներկրվող սարքավորումների տվյալներ, իսկ «Գորիսի Ջրատարշին» ՓԲ ընկերությունը ներկայացրեց, որ սարքավորումները գտնվում են ՀՀ-ում և սարքավորումներից <<վագոնետը>> օգտագործված է, սակայն ընկերությունը նշեց, որ երաշխիքային սպասարկման ժամկետ սահմանել է 36 ամիս:

**Հանձնաժողովի որոշումը**

---

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-21/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից շտկված Հավելված 1.1-ը (սարքեր և սարքավորումների նկարագիր)՝ համարել հրավերի պահանջներին համապատասխան:

**2.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-21/6-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը, հանձնաժողովը «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Գորիսի Ջրատարշին» ՓԲ ընկերություններին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 31.05.2021 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ):

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | | Վ. Օհանջանյան |
| անդամներ | | Ա. Սիմոնյան |
| | | Է. Մխիթարյան |
| | | Տ. Բոյախչյան |
| | | Ս. Ալեքսանյան |
| Քարտուղար | | Ա. Սարգսյան |